

# ԱՐՑԱԽ
## ՎՏԱՆԳՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# ARTSAKH
## ENDANGERED HERITAGE

# АРЦАХ
## НАСЛЕДИЕ В ОПАСНОСТИ

ՄԱՍ
PART
ЧАСТЬ
2

ԵՐԵՎԱՆ
YEREVAN
ЕРЕВАН
2025

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY
АРМЯНСКИЙ КУЛЬТУРНЫЙ И ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ СОЮЗ «АМАЗГАИН»

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
ФОНД ИЗУЧЕНИЯ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

**Քորթոշյան Րաֆֆի**
Արցախ. վտանգված ժառանգություն, մաս 2 / Ր. Քորթոշյան: ՀՃՈՒ հիմնադրամ / Ր. Քորթոշյան.-Եր.:
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2025.-176 էջ:

Նախագիծն իրականացվել է
Համազգային հայ կրթական և մշակութային միության Հայաստանի ու Արցախի գրասենյակների նախաձեռնությամբ,
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի աշխատասիրությամբ, ինչպես նաև
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության և Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության
«Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի համագործակցությամբ:

This project was initiated by Hamazkayin Armenian Educational and Cultural Society's Yerevan and Artsakh offices. It is based on the work of Research on Armenian Architecture Foundation and was brought to life in partnership with Nikol Aghbalian Students' Union of the ARF and the State Service for the Preservation of Historical Environment, a state non-commercial organization of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Artsakh

Проект осуществлен Фондом изучения армянской архитектуры по инициативе филиалов Армянского культурного и образовательного фонда «Амазгаин» в Армении и Арцахе, при сотрудничестве со Студенческим союзом АРФД им. Никола Агбаляна, при участии ГНКО «Государственная служба охраны исторической среды» при Министерстве культуры, по вопросам молодежи и туризма Республики Арцах.

Հրատարակության հովանավոր — պրն. Յարութ Պրոնոզեան

Publication sponsorship by — Mr. Harout Bronozian

Спонсор издания: — Г-н Арут Бронозян

ISBN 978-9939-843-70-4

© ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 2025
© HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY, 2025
© АРМЯНСКИЙ КУЛЬТУРНЫЙ И ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ СОЮЗ «АМАЗГАИН», 2025

# ԸՆԴԴԵՄ ՖԱՇԻԶՄԻ՝ ՄԵԿՏԵՂԵԼՈՎ ՄԵՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2023 թ. «Համազգային» հայ կրթական և մշակութային միությունը նախաձեռնեց 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի տիրապետության տակ անցած Արցախի հայկական հուշարձանների վերաբերյալ պատկերագրքի հրատարակության գործը: Ցավոք, նույն թվականի աշնանն Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության մնացած հատվածը ևս բռնազավթվեց ազերիների կողմից, և «Համազգայինը», կյանքի ողբերգական իրողություններին արձագանքելով, տրամաբանական և անհրաժեշտ համարեց հրատարակել այս գրքի երկրորդ հատորը: Նոր հատորը պետք է ընդգրկեր արդեն 2023-ից հետո հայության կորցրած հոգևոր-մշակութային, պատմական անցյալի և արդի ժամանակներում կերտված հուշարձանները:

«ԱՐՑԱԽ. ՎՏԱՆԳՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» խորագրով սույն աշխատության լույսընծայման հիմնական նպատակն է Արցախի հուշարձանների փաստագրումը, ինչպես և բացահայտումը, թե դրանք ինչ բարբարոսական վերաբերմունքի են արժանանում հայկական, քրիստոնեական և առհասարակ քաղաքակրթության արժեքների թշնամի ադրբեջանցիների կողմից՝ իրենց պաշտոնական իշխանությունների անմիջական թելադրանքով: Նախատեսված լինելով մասնագետների, ինչպես և լայն հանրության համար՝ սույն աշխատանքը նախաձեռնողները նպատակ ունեն գրքի հրատարակությամբ ներկայացվող հուշարձաններին սպառնացող աղետի մասին իրազեկել ինչպես հայ, այնպես էլ միջազգային լսարանին, նաև պատմաբանների, մշակութաբանների, ազգագրագետների ու քաղաքական գործիչների հանրույթներին:

Հայ ժողովուրդը չի մոռացել, թե մի քանի տասնամյակների ընթացքում ինչ մոլեռանդ հետևողականությամբ ադրբեջանցիները ոչնչացրին Նախիջևանի հայկական հարուստ մշակութային ժառանգությունը, այդ թվում Ջուղայի՝ մոտ 12.000 բարձրարժեք, համաշխարհային քաղաքակրթական ժառանգության շարքում յուրատեսակ ու անկրկնելի խաչքարերը: Որ պատմությունը կկրկնվի այս դեպքում ևս, ոչ միայն պատմությունը պետք է հուշեր, այլև այն իրողությունները, որոնք սանձազերծվեցին մեր աչքի առջև 2020 թվականի պատերազմական գործողություններից անմիջապես հետո: Թերևս դասեր քաղելով սեփական պատմությունից՝ Ադրբեջանի նորանկախ հանրապետության ղեկավարությունն անմիջապես ձեռնամուխ եղավ իր ցեղասպանական քաղաքականության երկրորդ փուլին՝ այս անգամ թիրախ ընտրելով տարածքի բնիկ տերերի քարե անձնագիրը հանդիսացող մշակութային ժառանգությունը: Ընդ որում, հոգևոր-մշակութային եղեռնն իրականացնելով ոչ միայն դրանց իսպառ ոչնչացմամբ, այլև տվյալ հուշարձանների վրայից հայկականության հետքերը՝ գրությունները, խորհրդանիշները ջնջելու, այդ հուշարձանների պատկանելիության վերաբերյալ կեղծ տեղեկություններ հորինելու միջոցով՝ վերջիններիս վերագրելով ալբանական, ուդիական և այլ ծագում: Ի դեպ, արձանագրենք, որ ցեղասպանական և հայատյաց-ֆաշիստական բնույթով ու գործելակերպով ազերիները ոչ միայն չեն զիջում, այլև փաստում են հոգեհարազատությունն ավազ եղբայրների հետ՝ ընդօրինակելով անցած դարասկզբի, ինչպես և հետցեղասպանական շրջանի թուրքական գործելակերպն արևմտահայոց հոգևոր-պատմական ժառանգության նկատմամբ:

Այն ժամանակ, երբ ստեղծվում է այս գիրքը, և գրվում են այս տողերը, ադրբեջանցիներն Արցախում քարուքանդ են անում, փոշիացնում են ամեն հայկական վկայություն՝ երկրի երեսից վերացնելով Արցախի պատկանելության մասին ապագայում անխուսափելիորեն հրապարակ բերվելիք կարևոր փաստարկները: Ֆաշիզմի դեմ Երկրորդ աշխարհամարտում մարդկության տարած հաղթանակի 80-ամյակի շեմին հարևան երկրի իշխանությունը ոչնչացնում է այդ պատերազմի մասնակից, ֆաշիզմի դեմ պայքարում կյանքները զոհաբերած հերոսների հուշարձաններն ու հուշահամալիրները, իսկ այս գործի գլխավոր կազմակերպիչը գերմանական ֆաշիզմի դեմ պայքարած այլ երկրների ղեկավարների հետ 2025 թվականի մայիսի 9-ին Մոսկվայի կարմիր հրապարակում կտոնի ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի հոբելյանը:

Ցանկանում ենք հուսալ, որ «Համազգայինի» կողմից հրատարակված այս պատկերագիրքը կարող է համեստ դեր ունենալ Արցախի հողում իրականացված ու շարունակվող վայրագության մասին վկայելու և դրանք զսպելու ջանքերում:

Դժվար է ասել՝ մեզ համար կարևոր այս գրքի հրատարակման գաղափարը գիտական ու մասնագիտական ինչ որակով հնարավոր կլիներ կյանքի կոչել, եթե «Համազգայինի» հետ սիրահոժար չգործակցեր համապատասխան աշխատանքի տարիների փորձառություն և վաստակ ունեցող ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ:

Պատկերագրքի պարունակած հարուստ, գիտականորեն փաստարկված և ամբողջական նյութերի համար երախտագիտություն հայտնելով հիմնադրամին՝ մաղթում ենք նրան երկար ու բեղուն ճանապարհ իր ազգանվեր առաքելությանը հետամուտ: Կասկած չունենք, որ մեր ազգային նվիրական նպատակները հնարավոր է իրականացնել միայն համազգային մեր կարողությունների մեկտեղման շնորհիվ:

***Արտաշես Շահբազյան***
*«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ»*
*Կենտրոնական վարչության անդամ*

# UNITING OUR NATIONAL CAPABILITIES AGAINST FASCISM

In 2023 the Hamazkayin (Nationwide) Armenian Educational and Cultural Society initiated the publication of a book-album documenting monuments located within territories of Artsakh which came under the control of Azerbaijan in 2020, after the 44-day war. Unfortunately, in the autumn of the same year, as a result of the war unleashed by Azerbaijan against the Republic of Artsakh, the remaining part of the country was also occupied by the Azeris. Responding to these tragic events, the Hamazkayin considered it logical and imperative to publish the second volume of this book to present the religious, cultural, historical, and modern monuments that the Armenian people had lost after 2023. The main goal of publishing this work entitled Artsakh: Endangered Heritage is to document which monuments of Artsakh as well as to reveal the barbaric treatment they are subjected to by the Azerbaijanis—on the order of their authorities—who are enemies of Armenian and Christian heritage, and broadly speaking, of civilization in general. Intended for both specialists and the general reader, this work aims to raise awareness about the danger threatening the Armenian monuments so as both the Armenian and international audience as well as historians, art historians, ethnologists and political figures are well informed about it.

The Armenian people have not forgotten the annihilation of the rich Armenian cultural heritage of Nakhichevan committed by the Azerbaijanis with fanatical consistency over several decades. Among the destroyed monuments of the region were the nearly 12,000 highly significant and unique khachkars (cross-stones) of Jugha (Julfa), which were an inseparable part of world cultural heritage. Not only the past experience, but also the events that occurred immediately after the 2020 war made it clear that history would repeat itself as far as the monuments of Artsakh were concerned. Exercising a policy that was well-known to them from their own history, the authorities of the Republic of Azerbaijan immediately embarked on the second part of their genocidal agenda, this time targeting the cultural heritage—the stone "passport"—of the indigenous people of the land of Artsakh. Some religious and cultural monuments were completely destroyed, while others were stripped of their typical Armenian features such as inscriptions and symbols; moreover, the Azerbaijanis also started falsifying history, attributing Albanian or Udi origin to the Armenian monuments of Artsakh. These genocidal actions as well as the Azeris' misanthropic and fascist inclinations have proved that they are truly related to their senior brothers, namely the Turks who perpetrated the same violence against the Western Armenian religious and historical heritage before and especially after the Genocide of 1915.

While this book is being prepared and these lines are being written, the Azerbaijanis are destroying everything Armenian in Artsakh, expunging all the monuments and other evidence that could inevitably be used in the future to prove that Artsakh is an Armenian land. On the eve of the 80th anniversary of the victory over fascism in World War II, the authorities of the neighbouring country are destroying monuments and memorials to the heroes who sacrificed their lives in the fight against fascism. Moreover, the main perpetrator of this crime will celebrate the anniversary of the victory over fascism in Moscow's Red Square on 9 May 2025 together with the leaders of other countries that struggled against German fascism.

We hope that this book published by the Hamazkayin can play a modest role in the efforts to raise awareness about, and curb, the atrocities committed and still ongoing in the land of Artsakh.

It is difficult to say how successful this important book would have been if the Hamazkayin had not collaborated with Research on Armenian Architecture (RAA) Foundation, which has decades of reputable experience in this field.

We would like to express our gratitude to the foundation for the rich, scientifically substantiated and comprehensive material included in this book-album. We wish the RAA a long and fruitful journey in pursuing its patriotic mission. We have no doubt that our cherished national goals can be achieved only through the unification of our skills, efforts and abilities.

***Artashes Shahbazian***
*Member of the Central Executive Board of Hamazkayin Armenian Educational and Cultural Society*





# ОБЪЕДИНЯЯ НАШИ ОБЩЕНАЦИОНАЛЬНЫЕ ВОЗМОЖНОСТИ В БОРЬБЕ ПРОТИВ ФАШИЗМА

В 2023 г. Армянский культурный и образовательный союз «Амазгаин» инициировал издание книги-альбома о памятниках, расположенных на территориях Арцаха, которые перешли под контроль Азербайджана после 44-дневной войны 2020 г. К сожалению, в результате войны, развязанной Азербайджаном осенью 2023 г., оставшаяся часть Республики Арцах также была оккупирована азербайджанскими войсками. Союз «Амазгаин», откликаясь на трагические реалии современности, посчитал целесообразным издать вторую часть книги-альбома, в которую планировалось включить духовно-культурные, исторические и недавно построенные памятники, утраченные армянским народом после 2023 г.

Основной целью публикации труда под названием «АРЦАХ: НАСЛЕДИЕ В ОПАСНОСТИ» является документирование памятников Арцаха и фиксация актов вандализма со стороны азербайджанских властей, направленных против армянских, христианских и общецивилизационных ценностей. Книга-альбом рассчитана как на специалистов, так и на широкую аудиторию. Инициаторы данной работы ставят целью информировать как армянскую, так и международную общественность, включая историков, этнографов, культурологов и политиков, о катастрофе, угрожающей этим памятникам.

Армянский народ не забыл, как на протяжении нескольких десятилетий азербайджанцы с фанатичной последовательностью уничтожали богатейшее армянское культурное наследие Нахиджевана (Нахичевани), включая около 12 000 уникальных и неповторимых хачкаров Джуги (Джульфы), которые входят в число объектов мирового цивилизационного наследия. События, последовавшие сразу после боевых действий 2020 г., показали, что история скоро повторится. Возможно, извлекая уроки из собственной истории, руководство новой независимой Азербайджанской Республики немедленно приступило ко второму этапу своей геноцидальной политики, нацеленной на культурное наследие – «каменный паспорт» коренных жителей этой территории. Духовный и культурный геноцид сопровождался не только полным уничтожением памятников и стиранием с них армянских надписей и символов, но и фальсификацией сведений об их происхождении, приписывая их албанскому, удинскому и иным этническим наследиям. Кстати, зафиксируем, что действия азербайджанцев, отличающиеся геноцидальной, человеконенавистнической и фашистской сущностью, по жестокости не уступают деяниям старших братьев-турок. Они подтверждают свое духовное родство с ними, подражая практике уничтожения духовного и исторического наследия западных армян, начавшейся в начале XX в. и продолжавшейся после геноцида 1915 г.

В то время, когда создается эта книга-альбом и пишутся эти строки, азербайджанцы продолжают уничтожать все армянские свидетельства в Арцахе, стирая с лица земли важные доказательства его исторической принадлежности – доказательства, которые неизбежно всплывут в будущем. В преддверии 80-летия победы человечества над фашизмом во Второй мировой войне власти соседней страны уничтожают памятники и мемориальные комплексы героев, которые участвовали в той войне и отдали свои жизни в борьбе с фашизмом. При этом главный организатор этих действий вместе с руководителями других стран, боровшихся против немецких фашистов, отметит годовщину победы 9 мая 2025 г. на Красной площади в Москве.

Хочется надеяться, что книга-альбом, изданная Союзом «Амазгаин», сможет сыграть скромную роль в усилиях по фиксации и пресечению актов вандализма, как совершенных ранее, так и продолжающихся на территории Арцаха.

Трудно сказать, на каком научно-профессиональном уровне была бы реализована идея издания этой важной для нас книги-альбома, если бы с нами любезно не сотрудничал ФОНД ИЗУЧЕНИЯ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ – организация с многолетним опытом и значительными заслугами в изучении данного материала.

Выражая благодарность фонду за богатый и научно обоснованный материал, представленный в книге-альбоме, мы желаем ему долгого и плодотворного пути в осуществлении его патриотической миссии. Мы уверены, что наши заветные национальные цели могут быть достигнуты лишь через объединение общенациональных усилий.

*Арташес Шахбазян*

*ЧЛЕН ЦЕНТРАЛЬНОГО ПРАВЛЕНИЯ АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО И ОБРАЗОВАТЕЛЬНОГО СОЮЗА «АМАЗГАИН»*

# ԱՐՑԱԽ. ՎՏԱՆԳՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Անհերքելի է այն փաստը, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի դեմ Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած և էթնիկ զտումներով զուգակցվող պատերազմները (1991-1994, 2016, 2020, 2023 թթ.) նաև արցախահայերի մշակույթի դեմ էին և ուղեկցվել են մշակութային ցեղասպանությամբ:

Առկա են հսկայածավալ փաստեր, որոնք վկայում են, որ 1991 թվականից առ այսօր Ադրբեջանի իրարահաջորդ իշխանությունները հայկական հուշարձանների (հատկապես՝ պաշտամունքային և գերեզմանական) ոչնչացման քաղաքականություն են վարում, որոշ դեպքերում՝ երկրի ռազմական ուժերի ներգրավմամբ:

Դժվար է փաստել, թե պետությունը ե՞րբ է պատվիրել վանդալական գործողությունները, որոնք իրականացվել են զինված ուժերի կամ այլ մարմինների կողմից, և ե՞րբ է այն ձեռնարկվել ինքնուրույն գործող անհատների կամ խմբերի կողմից: Այնուհանդերձ, հայկական մշակութային ժառանգության ոչնչացման վկայությունների թիվը ճնշող է և հուշում է պետության կողմից միտումնավոր և կանխամտածված քաղաքականություն վարելու մասին:

Ցավոք սրտի, հայկական հուշարձանների ոչնչացման ադրբեջանական քաղաքականությունը նոր թափ ստացավ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44-օրյա պատերազմից հետո միջազգայնորեն չճանաչված Արցախի Հանրապետության այն տարածքներում, որոնք անցան Ադրբեջանի վերահսկողության ներքո:

Առկա աղաղակող ապացույցներից հետո՝ 2021 թ. դեկտեմբերի 7-ին, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում հրապարակեց Ադրբեջանին պարտավորեցնող որոշում. «Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ եկեղեցիների և պաշտամունքի այլ վայրերի, հուշարձանների, ուղենիշային պատկերների, գերեզմանատների և այլ ցուցանմուշների հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները»:

# ARTSAKH: ENDANGERED HERITAGE

It is undeniable that the wars (1991 to 1994, 2016, 2020, 2023) unleashed by the Republic of Azerbaijan against the Artsakh people's right to self-determination were also against their indigenous Armenian cultural heritage, being accompanied not only by ethnic cleansing but also by cultural genocide.

There is a extensive amount of evidence proving that since 1991, the successive Azerbaijani governments have pursued a policy of destroying Armenian monuments (especially religious and funerary ones), in some cases with the involvement of military forces.

It is difficult to establish when the acts of vandalism were carried out on the order of the Azerbaijani authorities (by the armed forces or other bodies), and when were they undertaken by individuals or groups acting independently. In any case, there is ample evidence of the destruction of Armenian cultural heritage, suggesting that it has been deliberately perpetrated through premeditated policy exercised by the Azerbaijani state.

Unfortunately, the Azerbaijani policy of destroying Armenian monuments gained new momentum in the territories of the internationally unrecognized Republic of Artsakh which came under Azerbaijani control after the 44-day war unleashed by Azerbaijan on 27 September 2020.

Facing the shocking evidence, on 7 December 2021, the UN International Court of Justice issued a decision within the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, calling on Azerbaijan to "take all necessary measures to prevent and punish acts of vandalism and desecration of Armenian cultural heritage, including churches and other places of worship, monuments, landmarks, cemeteries and artifacts."

The objective of the first volume of this book-album was to present the best specimens of Art-

# АРЦАХ: НАСЛЕДИЕ В ОПАСНОСТИ

Войны, развязанные Азербайджанской Республикой против права народа Арцаха на самоопределение, сопровождались этническими чистками (1991-1994 гг., 2016, 2020 и 2023 гг.) и культурным геноцидом. Это неоспоримый факт.

Существует множество доказательств того, что с 1991 г. сменявшие друг друга правительства Азербайджана проводили политику уничтожения армянских памятников (особенно культовых и надгробных), в некоторых случаях при поддержке вооруженных сил страны.

Трудно установить, когда акты вандализма совершались на государственном уровне – вооруженными силами или другими органами власти, а когда – отдельными лицами или группами, действовавшими самостоятельно. Тем не менее, доказательства уничтожения армянского культурного наследия в Азербайджане являются неопровержимыми и свидетельствуют о преднамеренной и продуманной государственной политике по уничтожению армянских памятников.

К сожалению, указанная политика приобрела новые масштабы на территориях непризнанной международным сообществом Республики Арцах, которые перешли под контроль Азербайджана после 44-дневной войны, начавшейся 27 сентября 2020 г.

После представления неопровержимых доказательств 7 декабря 2021 г. Международный суд ООН, в соответствии с Международной конвенцией о ликвидации всех форм расовой дискриминации, вынес обязательное к исполнению решение в отношении Азербайджана: «Принять все необходимые меры для предотвращения и наказания актов вандализма и осквернения армянского культурного наследия, включая, но не ограничиваясь, церкви и другие культовые сооружения, памятники, достопримечательности, кладбища и артефакты».

Սույն պատկերագրքի առաջին հատորի հրատարակման նպատակն էր միջազգային հանրությանը ներկայացնել 2020 թ. 44-օրյա պատերազմի ավարտից հետո Արցախի վտանգված պատմամշակութային ժառանգության լավագույն նմուշները՝ փորձելով դրանք պաշտպանել ահագնացող ոչնչացման վտանգից:

Ի դժբախտություն հայ ժողովրդի և համամարդկային արժեքներին հավատարիմ քաղաքակիրթ հասարակությունների՝ Ադրբեջանը նույնիսկ Արդարադատության միջազգային դատարանի բանաձևից հետո շարունակում է պղծել և ոչնչացնել հայկական ժառանգությունը՝ կոպտորեն խախտելով դատարանի որոշումը և միևնույն ժամանակ նենգաբար քաղաքակիրթ ձևանալով միջազգային ասպարեզում:

Ստորև ներկայացնում ենք մի քանի հուշարձաններ, որոնց վտանգված լինելն ահազանգել էինք պատկերագրքի առաջին հատորում: Դրանք հիմնահատակ ոչընչացվեցին 2023-2024 թթ.:

sakh’s historical and cultural heritage – endangered after the 44-day war in 2020 – to the international community, in an attempt to protect them against the growing threat of deliberate destruction.

To the misfortune of the Armenian people and the whole civilized world upholding universal human values, and even after the resolution of the International Court of Justice, Azerbaijan continued desecrating and destroying Armenian heritage, blatantly violating the court’s decision, at the same time, deceitfully pretending to be a civilized country on the international arena.

Below we present several monuments which were included in the first volume of this book-album as highly endangered ones. These were completely destroyed in 2023 and 2024.

Целью публикации первого тома книги-альбома было представить международному сообществу лучшие памятники исторического и культурного наследия Арцаха, оказавшиеся под угрозой уничтожения после окончания 44-дневной войны 2020 г., и попытаться защитить их от полного уничтожения.

К сожалению, для армянского народа и цивилизованных обществ, приверженных общечеловеческим ценностям, Азербайджан продолжает осквернять и уничтожать армянское наследие, несмотря на постановление Международного суда ООН, грубо нарушая его и при этом лживо представляя себя цивилизованной страной на международной арене.

Ниже представлены памятники, об опасности уничтожения которых мы предупреждали в первом томе книги-альбома. Они были полностью разрушены в 2023-2024 гг.



**Մոխրենիս գյուղի**
**Սբ. Սարգիս եկեղեցի**

**St. Sargis Church,**
**Mokhrenis Village**

**Церковь Сурб Саркис,**
**село Мохренис**






Արբանյակային պատկերները ցույց են տալիս, որ եկեղեցին ավերվել է 2022 թ. մարտից մինչև հուլիս ընկած ժամանակահատվածում, իսկ 2023 թ. եկեղեցու տեղում սկսվել է նոր կառույցի շինարարությունը՝ վերջնականապես ոչնչացնելով նաև հիմքերը:

Satellite images show that the church was ruined between March and July 2022; in 2023 the construction of a new structure began on its site, finally wiping out its foundations.

Спутниковые снимки показывают, что церковь была разрушена в 2022 г. (между мартом и июлем), а в 2023 г. на ее месте началось строительство нового сооружения, в результате чего фундамент церкви был окончательно уничтожен.

**Շուշիի Սբ. Յովհաննես Մկրտիչ եկեղեցի.**

- Եկեղեցին դեռևս անվնաս էր 2020 թ. նոյեմբերի 10-ին՝ հրադադարի հայտարարման հաջորդ օրը: Մոտակայքում կանգնած է ադրբեջանցի զինվորը, և երևում է, որ եկեղեցին պատերազմի ժամանակ չի տուժել:
- Եկեղեցին զինադադարի համաձայնագրից մեկ տարի անց՝ ավերված վիճակում
- Եկեղեցին իբր նորոգվում է 2022 թ. «Շուշայի պատմամշակութային հուշարձանների պահպանում և վերականգնում» ադրբեջանական ծրագրի շրջանակներում:
- Ինչպես երևում է արբանյակային լուսանկարներից, 2023 թ. դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թ. ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում եկեղեցին հիմնահատակ ավերվել է:

**St. Hovhannes Mkrtich (John the Baptist) Church, Shushi City**

- The church was still intact on November 10 2020, a day after the ceasefire was declared. An Azerbaijani soldier stands nearby, and it is clear that the church was not damaged during the war.
- The church was in ruins a year after the ceasefire agreement.
- The church was allegedly being renovated in 2022 within an Azerbaijani programme entitled “Conservation and Restoration of Historical and Cultural Monuments of Shusha.”
- As can be seen from satellite photos, the church was completely destroyed between 28 December 2023 and 4 April 2024.

**Церковь Сурб Ованес Мкртич (Св. Иоанна Крестителя) в Шуши.**

- 10 ноября 2020 г., на следующий день после объявления прекращения огня, церковь была невредима. На снимке рядом стоит азербайджанский солдат, и видно, что во время войны церковь не пострадала.
- Через год после заключения соглашения о прекращении огня церковь находилась в разрушенном состоянии.
- В 2022 г. церковь якобы реставрировалась в рамках азербайджанской программы «Сохранение и реставрация историко-культурных памятников Шуши».
- Судя по спутниковым снимкам, в период с 28 декабря 2023 г. по 4 апреля 2024 г. церковь была полностью разрушена.

















**Բերձորի Սբ. Համբարձման եկեղեցի.**
Արբանյակային պատկերները ցույց են տալիս, որ եկեղեցին ավերվել է 2023 թ. երկրորդ կեսից մինչև 2024 թ. սկիզբն ընկած ժամանակահատվածում:

**Sourb Hambardzman (Holy Ascension) Church, Berdzor Town.**
Satellite images show that the church was destroyed between the second half of 2023 and the beginning of 2024.

**Церковь Сурб Амбарцум (Св. Вознесения) в Бердзоре.**
Спутниковые снимки показывают, что церковь была разрушена в период со второй половины 2023 г. по начало 2024 г.

Երբ սույն պատկերագրքի առաջին հատորը պատրաստվում էր հրատարակության, Արցախի դեմ Ադրբեջանի կողմից 2023 թ. սեպտեմբերի 19-ին սանձազերծված պատերազմի ընթացքում ավարտին հասցվեց արցախահայության էթնիկ զտումների ալիևյան քաղաքականությունը. մեկ շաբաթվա ընթացքում ամբողջապես հայաթափվեց Արցախը:

Այժմ վտանգված են Արցախի՝ Ադրբեջանի հսկողության տակ անցած հայկական բոլոր հուշարձանները: Սույն պատկերագրքում անդրադառնում ենք դրանց որոշ քանակին:

Երանի՜ երբեք գոյություն չունենար այս պատկերագիրքը ստեղծելու շարժառիթը ...

***Ռաֆֆի Քորթոշյան***
*ՀՃՈՒ հիմնադրամի համատնօրեն*

When the first volume of this book-album was being prepared for publication, Azerbaijan unleashed another war against Artsakh on 19 September 2023, and Aliyev's policy of ethnic cleansing of Artsakh Armenians was implemented: within a week, the region was totally depopulated.

Now all the Armenian monuments in Artsakh are endangered, and we have prepared this book-album to document and present part of them.

We wish we never had a reason to publish such a work...

***Raffi Kortoshian***
*Co-director of RAA Foundation*

Когда первый том книги-альбома готовился к печати, во время войны, развязанной Азербайджаном против Арцаха 19 сентября 2023 г., была окончательно претворена в жизнь политика Алиева по этнической чистке арцахских армян. В течение недели армянское население было изгнано из Арцаха. Все армянские памятники в Арцахе, перешедшие под контроль Азербайджана, сейчас находятся под угрозой тотального уничтожения. Им и посвящена книга-альбом.

Очень хотелось бы, чтобы никогда не появлялся повод для ее создания…

***Раффи Кортошян***
*Содиректор ФИАА*

---

Հղումներով կարող եք ներբեռնել «Արցախի վտանգված հայկական քրիստոնեական ժառանգությունը» անգլերեն գիրքը և համանուն վավերագրական ֆիլմը, որոնք փաստերով ներկայացնում են Ադրբեջանի՝ իրարահաջորդ (1991 թ.-ից ի վեր) իշխանությունների որդեգրած մշակութային ցեղասպանության քաղաքականությունն Արցախի հայկական ժառանգության նկատմամբ:

Scan the QR Code to download an English-language book and a documentary both entitled *The Endangered Armenian Christian Heritage of Artsakh* and exposing the policy of cultural genocide exercised against the Armenian heritage of Artsakh by the authorities of Azerbaijan since 1991.

По указанным ссылкам вы можете скачать книгу «Армянское христианское наследие Арцаха в опасности» (на английском языке) и одноименный документальный фильм. Представленные факты доказывают, что власти Азербайджана последовательно применяют политику культурного геноцида, начиная с 1991 г.

---

Հղումով կարելի է տեսնել 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո արված բազմաթիվ տեսանյութեր, որոնք ապացուցում են հայկական հուշարձանների ոչնչացումն Ադրբեջանի զինված ուժերի գրաված տարածքներում:

Scan the QR Code to watch videos taken after the 44-day war of 2020 that reveal the destruction of Armenian monuments in the Artsakh lands under Azerbaijani occupation.

В видеоматериалах по ссылке показаны факты уничтожения армянских памятников азербайджанскими военными на территориях, оккупированных после 44-дневной войны 2020 г.

Վտանգված հայկական հուշարձաններ
Արցախի Հանրապետության այն տարածքներում,
որոնք անցել են Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ
2023 թ. սեպտեմբերյան էթնիկ զտումներից հետո:

Դատելով Ադրբեջանի իշխանությունների գործողություններից՝ այս վտանգված
հուշարձանների մի մասն արդեն ավերված կլինի, մինչ դուք կընթերցեք գիրքը:

Endangered Armenian Monuments
Located in those territories of the unrecognised Republic of Artsakh
which came under the control of the Republic of Azerbaijan
in the aftemath of the ethnic cleansing committed in September 2023

Judging from the actions of the Azerbaijani Government,
by the time you read this book,
some of the endangered monuments will have been destroyed.

Находящиеся под угрозой полного уничтожения армянские памятники,
расположенные на тех территориях непризнанной Республики Арцах,
которые перешли под контроль Азербайджанской Республики
в результате этнических чисток в сентябре 2023 г.

Судя по действиям правительства Азербайджана,
к тому времени, когда вы будете читать эту книгу,
некоторые из этих памятников
будут уже уничтожены.







**Թամցի** եղցի (ԺԷ դ.),
**Այգեստան** գյուղ

Եկեղեցու հյուսիսում կա **խաչքարերով** և **տապանաքարերով գերեզմանոց**:

**Խաչքարեր** (ԺԲ-ԺԳ դդ.) գերեզմանոցից

**Tamtsi Yeghtsi** Church (17th c.),
**Aygestan** Village

There is a **cemetery** of **cross-stones** and **tombstones** north of the church.

**Cross-stones** (12th to 13th cc.) from the cemetery

**Тамци Ехци** (XVII в.),
село **Айгестан**

К северу от церкви находится **кладбище с хачкарами** и **надгробными камнями.**

**Хачкары** (XII-XIII вв.) на церковном кладбище

39.875338 N, 46.681258 E

АСКЕРАНСКИЙ РАЙОН
ASKERAN DISTRICT
ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

**Սբ. Հովհաննես (Մթնախութ)** եկեղեցի
(ԺԹ դ.),
**Այգեստան** գյուղ

Եկեղեցու շրջակայքում է գտնվում ԺԹ-Ի դդ. **տապանաքարերով գերեզմանոցը**:

**St. Hovhannes (John) Church (Mtnakhut)**,
19th c.
**Aygestan** Village

The church is surrounded with a **cemetery of tombstones** dating from the 19th and 20th centuries.

Церковь **Сурб Ованес** (**Св. Иоанна**) или **Мтнахут** (XIX в.),
село **Айгестан**

Вокруг церкви раскинулось **кладбище** с **надгробными камнями** XIX-XX вв.







39.881895 N, 46.726255 E





**Սբ. Աստվածածին** եկեղեցի (1839 թ.),
**Այգեստան** գյուղ

**Sourb Astvatsatsin**
**(Holy Mother of God)** Church (1839),
**Aygestan** Village

Церковь **Сурб Аствацацин**
(**Пресв. Богородицы**) (1839 г.),
село **Айгестан**

39.866787 N, 46.726510 E

## ԱՐՑԱԽ. ՎՏԱՆԳՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


Կազմող Ռաֆֆի Քորթոշյան
Հայերենի խմբագիրներ Հասմիկ Հովհաննիսյան, Էմմա Աբրահամյան
Անգլերենի թարգմանիչ Գայանե Մովսիսյան
Ռուսերենի թարգմանիչ Դիանա Գրիգորյան
Համակարգչային ձևավորողներ Արմեն Գևորգյան, Լիանա Հովհաննիսյան-Քորթոշյան

Կազմի լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի
Լուսանկարները՝ Սամվել Կարապետյանի, Սասուն Դանիելյանի, Լեռնիկ Հովհաննիսյանի, Ռաֆֆի Քորթոշյանի, Աշոտ Հակոբյանի, Սամվել Այվազյանի, Գայանե Բուդաղյանի, Արմինե Հայրապետյանի

Օգտագործված զարդապատկերները՝ **Արմեն Քյուրքչյանի** և **Հրայր Բազէ Խաչերեանի** «**Հայկական զարդարվեստ**» (Երևան, 2010) գրքից:


## ARTSAKH: ENDANGERED HERITAGE


Compiled by: **Raffi Kortoshian**
Editors of the Armenian text: **Hasmik Hovhannissian, Emma Abrahamian**
Translation into English by: **Gayane Movsissian**
Translation into Russian by: **Diana Grigorian**
Computer Design by: **Armen Gevorgyan, Liana Hovhannissian-Kortoshian**

Cover photo by: **Sasun Danielian**
Photos by: **Samvel Karapetian, Sasun Danielian, Lernik Hovhannisian, Raffi Kortoshian, Ashot Hakobian, Samvel Ayvazian, Gayane Budaghian, Armine Hayrapetian**

The book includes ornaments and motiffs from: **Armenian Ornamental Art** by **Armen Kyurkchyan** and **Hrair Hawk Khatcherian** (Yerevan, 2010).


## АРЦАХ: НАСЛЕДИЕ В ОПАСНОСТИ


Автор: **Раффи Кортошян**
Редакторы армянского языка: **Асмик Ованнисян, Эмма Абраамян**
Перевод на английский: **Гаяне Мовсисян**
Перевод на русский: **Диана Григорян**
Дизайн: **Армен Геворкян, Лиана Ованнисян-Кортошян**

Автор фотографии на обложке: **Сасун Даниелян**
Авторы фотографий: **Самвел Карапетян, Сасун Даниелян, Лерник Оганесян, Раффи Кортошян, Ашот Акопян, Самвел Айвазян, Гаяне Будагян, Армине Айрапетян**

В книге использованы прорисовки орнаментов из книги **Армена Кюркчяна** и **Грайра Базе Хачеряна** «**Армянский орнамент**» (Ереван, 2010).



ISBN 978-9939-843-70-4

www.hamazkayin.com

RAA

www.raa-am.org
www.armenianarchitecture.org
www.artsakhmonuments.org